ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 հոկտեմբերի 2016 թվականի N 148-Ա

Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Ն. Խաչատրյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Նունե Խաչատրյանին*** տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ տաս աշխատանքային օր՝ 2016 թվականի նոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 17-ը ներառյալ:

2. ***Նունե Խաչատրյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ՝ ***Արմենուհի Հովհաննիսյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ՝ ***Արմենուհի Հովհաննիսյանին*** և <<Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ ***Ռուզաննա Ավալյանին*** ապահովել <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ <<Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Ռուզաննա Ավալյան)* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 27
ք. Հրազդան